



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

**ՀՐԱՄԱՆ**

№ 47-Լ

«28» նոյեմբերի 2019թ.

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ, ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՇԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴԱՇԱՐԵՐԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԼՈՎԱԿՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՃԱՄԵՏՐԱԺ  
ԽԱՂԱՐԿԱՅԻՆ ՖԻԼՄԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2019 թվականի փետրվարի 2-ի N 02/Օ4.2/7794 հսկողական հանձնարարականի 10-րդ և 2019 թվականի ապրիլի 13-ի N ԿԱ/55-2019 հսկողական հանձնարարականի 6-րդ կետերը

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Հաստատել ֆինանսական գրագիտության, ձեռնարկատիրական հմտությունների զարգացման, մասնագիտական կրթության վերաբերյալ հեռուստահաղորդաշարերի, սոցիալական հոլովակների և կարճամետրաժ խաղարկային ֆիլմերի պատրաստման ծրագիրը՝ համաձայն հավելվածի,
2. Գլխավոր քարտուղարին՝ օրենքով սահմանված կարգով ապահովել մրցույթների կազմակերպման աշխատանքները:
3. Հրամանի կատարման համակարգումը վերապահել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Լուսինե Առաքելյանին:
4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

Հավելված

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019թ.

դեկտեմբերի -----ի N----- հրամանի

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ, ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴԱՇԱՐԵՐԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԼՈՎԱԿՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՃԱՄԵՏՐԱԺ  
ԽԱՂԱՐԿԱՅԻՆ ՖԻԼՄԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԾՐԱԳԻՐ**

**Ներածություն**

Հասարակական և քաղաքացիական առողջ արժեհամակարգի ձևավորումը պետության զարգացման հիմնական շարժիչ ուժն է, որի հիմքում ընկած է սեփական իրավունքների և պարտականությունների գիտակցմամբ, համամարդկային արժեքներով առաջնորդվող, կրթված, բանիմաց, աշխատասեր անհատը՝ իր բարեխիղճ աշխատանքով, արդարության, հանդուրժողականության սկզբունքով, պետության, հասարակության և ընտանիքի նկատմամբ պատասխանատվությամբ: Անձի նախաձեռնողականությունը չափազանց կարևոր է սեփական գիտելիքների դրսևորման, հասարակության մեջ կայացման, սոցիալական վիճակի և բարօրության ապահովման գործընթացում:

Հաշվի առնելով, որ անձի աշխատելու և նյութական բարիք ստեղծելու ցանկությունը որպես բարեկեցության և հարստանալու բացառիկ նախապայման դիտարկելու, քրեական ենթամշակույթի տարածումները բացառելու, նման դրսևորումները որպես հաջողության հասնելու, ճանաչման և հարգանքի գործոն ներկայացնելու առումով հեռուստատեսության, կինո և մեդիա արտադրության ոլորտի ազդեցությունը չափազանց մեծ է, անհրաժեշտություն է առաջացել մշակել ֆինանսական գրագիտության, ձեռնարկատիրական հմտությունների զարգացման, մասնագիտական կրթության վերաբերյալ հեռուստահաղորդաշարերի, սոցիալական հոլովակների և կարճամետրաժ խաղարկային ֆիլմերի պատրաստման ծրագիր՝ այն դիտարկելով որպես կրթության և գիտելիքի արժևորման հանրային դրդապատճառ: Ծրագրով նախատեսվում է, համագործակցելով հեռուստաընկերությունների, կինոարտադրության ոլորտի մասնագետների հետ, հեռուստատեսային արտադրանքի՝ սերիալների, ֆիլմերի, հոլովակների և հաղորդումների

միջոցով բարձրացնել քաղաքացիների ֆինանսական գրագիտության մակարդակը, զարգացնել բիզնես հմտությունները, ներկայացնել գործարարությամբ զբաղվելու գրավչությունները և հրապարակայնացնել այդ ասպարեզում հաջողության հասնելու հնարավորությունները:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունում կազմակերպվել են մի շարք քննարկումներ, նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ նախարարի տեղակալ Լ. Առաքելյանի գլխավորությամբ: Քննարկումների արդյունքում ՀՀ ԿԳՄՍ նախարարության միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտում առաջարկվել է միջոցներ հատկացնել ֆինանսական գրագիտության, ձեռնարկատիրական հմտությունների զարգացման, մասնագիտական կրթության վերաբերյալ հեռուստահաղորդաշարերի, սոցիալական հոլովակների և կարճամետրաժ խաղարկային ֆիլմերի պատրաստելու համար: Առաջարկը ներառվել է ԿԳՄՍՆ միջնաժամկետ ծախսային ծրագրում և «2020 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով «1192. Կրթության որակի ապահովում» բյուջետային հայտում նախատեսվել է միջոցառման հետևյալ անվանումով՝ «Ֆինանսական գրագիտության, ձեռնարկատիրական հմտությունների զարգացման, մասնագիտական կրթության վերաբերյալ հեռուստահաղորդաշարերի, սոցիալական հոլովակների և կարճամետրաժ խաղարկային ֆիլմերի պատրաստում» (11018 դասիչ): Ծրագրի իրականացման նպատակով նախատեսվել է 134. 000 հազ. դրամ /134 մլն դրամ/ :

### **Ծրագրի նպատակը**

- Նպաստել քաղաքացիական, հանրային և մշակութային արժեհամակարգի ձևավորմանը:
- հանրության շրջանում կարևորել կրթության, գիտելիքի ու մրցունակ մասնագիտություն ստանալու նշանակությունը,
- զարգացնել քաղաքացիների բիզնես հմտությունները,
- մեծացնել գործարարությամբ զբաղվելու գրավչությունը,
- ամրապնդել աշխատելով բարիք ստեղծելու, սեփական ուժերով և գիտելիքներով բարեկեցության հասնելու վստահությունը,
- խթանել քաղաքացիների նախաձեռնողականությունը սեփական սոցիալական վիճակի ու բարօրության ապահովման առումով,
- ձևավորել լավատեսություն ապագայի նկատմամբ:

### **Ծրագրի արդյունքները**

Կարճամետրաժ խաղարկային ֆիլմերի, հեռուստահաղորդումների, սոցիալական հոլովակների թողարկում, քաղաքացիների ֆինանսական և մեդիագրագիտության մակարդակի բարձրացում, բիզնես հմտությունների զարգացում, գործարարության խրախուսում:

### **Ծրագրի նկարագրությունը**

- Կարճամետրաժ 10 ֆիլմ,
- երկու եթերաշրջանով 32 հեռուստահաղորդումից (16+16) բաղկացած 1 հաղորդաշար, կրկնությունները ներառյալ՝ 64 հեռարձակում,
- 8 հեռուստատեսային ֆիլմ՝ մեկ եթերաշրջանում՝ 16 հեռարձակմամբ,
- 12 սոցիալական հոլովակ:

**1. Կարճամետրաժ ֆիլմերի պատրաստում և տարածում.** 4-6 թույն տևողությամբ ֆիլմերի բովանդակությունը պետք է բխի ծրագրի նպատակներից: Տևողության ընտրությունը պայմանավորված է համացանցային դիտելիության ընդհանուր ժամանակային ստանդարտներով: Նշված տևողությամբ ֆիլմերը հեռուստաալիքների մեծամասնությունը կարող է կամավոր ցուցադրել՝ առանց հիմնական եթերացանցի մեջ փոփոխություններ կատարելու: Կարճ ֆիլմերի ձևաչափն ընտրվել է նաև հաշվի առնելով՝

- գեղարվեստական արժեքը
- մուլտիպլիկատիվ էֆեկտը (նոր ստեղծագործական խմբերի ձևավորում)
- երկարատև և պարբերաբար շրջանառվելու հանգամանքը:

**2. Հեռուստահաղորդաշարի պատրաստում և հեռարձակում** երկու եթերաշրջանով (16+16) 32 հեռուստահաղորդումից բաղկացած տաղավարային հաղորդաշար նախատեսվում է նախագիծ ֆինանսական կրթության, գործարար հմտությունների, բիզնես սկսելու, գրանցման ընթացակարգի կամ ստարտափերի խրախուսման մասին:

**3. Հեռուստաֆիլմերի պատրաստում և հեռարձակում** մինչև 10 թույն տևողությամբ 8 հեռուստատեսային ֆիլմերը կներկայացնեն պատմություններ հայ գործարարների մասին, որոնք հաջողության են հասել կրթության, սիրած մասնագիտության, աշխատասիրության, կամքի ու նախաձեռնողականության շնորհիվ:

**4. Սոցիալական հոլովակների պատրաստում.** 30-45 վարկյան տևողությամբ 12 սոցիալական հոլովակները կանդրադառնան կրթության, գիտության, մշակույթի, սպորտի ոլորտներին հրատապ այն խնդիրներին, որոնք առնչվում են ծրագրի հիմնավորմանն ու նպատակներին:

### **Թիրախային լսարան**

Հաջողության պատմությունների հեռուստաֆիլմերի լսարան կարող են դիտարկվել ավագ դպրոցների աշակերտները, շրջանավարտները, ուսանողները, նոր աշխատանք /մասնագիտացում/ փնտրող քաղաքացիները: Հաշվի առնելով, որ սոցիալական հոլովակների թեման սովորաբար լինում է մեկը, յուրաքանչյուր սոցիալական տեսահոլովակի համար ընտրվելու է առանձին թիրախային խումբ:

Կարճամետրաժ ֆիլմերի լսարանի առանձնահատկությունները (տարիք, սեռ, կրթություն, սոցիալական կարգավիճակ և այլն) նույնպես կախված են յուրաքանչյուր ֆիլմում արձարծվող հարցերի շրջանակից:

Հեռուստատեսային հաղորդման թիրախային խումբը երիտասարդներն ու միջին տարիքի քաղաքացիներն են (սեզմենտավորումը կորոշվի հաղորդման մշակումից հետո):

**Բյուջե**

Ծրագրի բյուջեն կազմվել է հիմք ընդունելով «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի, հեռուստաընկերությունների և արտադրող ընկերությունների տրամադրած կողմնորոշիչ գնառաջարկներն ու նախահաշիվները:

**ՆԱԽԱՀԱՇԻՎ**

N	Գործողություն	Մեկ միավորի արժեք (հազ.դր.)	քանակ	Արժեք (հազ.դր.)	Ֆինանսավորման եղանակ
1.	Կարճամետրաժ ֆիլմերի պատրաստում	8.400	10	84.000	դրամաշնորհ
2.	Հեռուստահաղորդաշարի պատրաստում և հեռարձակում	1.093,750	32	35.000	դրամաշնորհ
3.	Հեռուստաֆիլմերի պատրաստում և հեռարձակում	1.050	8	8.400	դրամաշնորհ
4.	Սոցիալական հոլովակների պատրաստում	550	12	6.600	գնում
5.	Ընդամենը	-	-	134.000	դրամաշնորհ և գնում

## Ծրագրի իրականացման ժամկետները և ֆինանսավորումը

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2020 թվականին՝ ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսավորման շրջանակում:

### Իրականացման ժամկետները՝

N	Գործողություն	Ֆինանսավորման եղանակ	Մրցույթի ժամկետ	Ավարտի ժամկետ
1.	Խաղարկային կարճամետրաժ ֆիլմերի պատրաստում և տարածում	դրամաշնորհ	2019թ. դեկտեմբեր 2020թ. հունվար	2020թ. երկրորդ, երրորդ, չորրորդ եռամսյակ
2.	Հեռուստահաղորդաշարի պատրաստում և հեռարձակում	դրամաշնորհ	2019թ. դեկտեմբեր 2020թ. հունվար	2020թ. երկրորդ, երրորդ, չորրորդ եռամսյակ
3.	Հեռուստաֆիլմերի պատրաստում և հեռարձակում	դրամաշնորհ	2019թ. դեկտեմբեր 2020թ. հունվար	2020թ. երկրորդ, երրորդ, չորրորդ եռամսյակ
4.	Սոցիալական հոլովակների պատրաստում	գնում	2020թ. առաջին եռամսյակ	2020թ. առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ եռամսյակ

Ծրագրով նախատեսված 1-ին (խաղարկային կարճամետրաժ ֆիլմերի պատրաստում և տարածում), 2-րդ (Հեռուստահաղորդաշարի պատրաստում և հեռարձակում) և 3-րդ (Հեռուստաֆիլմերի պատրաստում և հեռարձակում) միջոցառումների համար

նախատեսվում է ֆինանսավորումն իրականացնել դրամաշնորհային մրցույթի միջոցով՝ համաձայն «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 24.12.2003թ. թիվ 1937-Ն որոշմամբ սահմանված կարգի, իսկ 4-րդ՝ Սոցիալական հոլովակների պատրաստում միջոցառումը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջներին համապատասխան: